# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Ներածություն

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի տարբեր մասերում ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքային նախագիծը կազմվում է Դիլիջանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա : Նախագիծը կազմված է Դիլիջանի քաղաքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, մարզպետարանի կողմից տրված նախագծային առաջադրանքի հիման վրա : Համաձայն վերը նշված առաջադրանքների վերակառուցվում է փողոցի տարածքը՝ 12214.0 գմ երկարությամբ:

Ճանապարհի հատակագիծը,երկայնական և լայնական կտրվածքները փոփոխության չեն ենթարկվում: Նորոգման աշխատանքները կազմակերպվում են չոր եղանակներին խոնավ լինելու դեպքում վերանորոգվող հատվածները պետք է անպայման չորացվեն:Ասֆալտ-բետոնային պատվածքների նորոգման ամենածավալային և հաճախակի իրականացվող աշխատանքներից մեկը փոսային նորոգումն է: Փոսային նորոգումները կատարվում են տաք ասֆալտ-բետոնային խառնուրդով,մոտավորապես նույն կազմով,ինչպիսին ունի ինքը պատվածքը:Մինչև նորոգման աշխատանքները սկսելը նորոգվող հատվածները մաքրում են ցեխից և քայքայված շինություններից:Նորոգման ենթակա հատվածները կավիճով եզրագծվում են,ճանապարհի առանձին զուգահեռ և ուղղահայաց ձևերով,այպես նրանք ընդգրկեն պատվածքի չքայքայված հատվածը 3-5սմ լայնությամբ:Նշված ձևով քանդված հատվածները կտրվում են հետահատ մուրճով:Եթե վնասվածքի խորությունը մինչև 2.5սմ է,կտրվում կատարվում է պատվածքի վերևի շերտի ամբողջ խորությամբ,իսկ ավելի խորությունը վնասվածքների դեպքում ամբողջ պատվածքի հատույթում և ստացվում է «արկղեր» ուղահայաց պատերով:Վնասվածքների եզրերը կտրելուց հետո «արկղերը» մաքրում են շինանյութերի մնացորդներից փողոցի մետաղական խողովակներով օդափչման միջոցով:Կտրված տեղերը,պատերը պատվում են այնպիսի կապակցվող նյութի բարակ շերտով, ինչպիսիք օգտագործվում են պատվածքի պատրաստման ժամանակ:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամ- քով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը շինարարական աղբից, բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շին. կազմակերպության աշխատողները և ղեկավարները պետք է միշտ հիշեն շրջակա միջավայրի պահպանման մասին : Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաս-տաթղթերը. ՇՆ և Կ III - 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» ՇՆ և Կ III - 1.75 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի տարբեր մասերում ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն ՇՆուԿ 3.01.01 - 85 « Շինարարության արտադրության կազմակերպում » և ՇՆ - 440 - 7 « Շինարարության տևողության նորմեր » ձեռնարներին համապատասխան :

Ճանապարհի նորոգման աշխատանքները կատարվելու են ճանապարհի վրա, որը ըստ ՀՀՇՆ 2 - 02 - 94 - ի գտնվում է սեյսմիկ 2 - րդ գոտում :

- Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական , տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ
- Հակահրդեհային անվտանգությունը շին հրապարակում և աշխատանքի տեղամասերում պահպանել համապատասխան հակահրդեհային անվտանգության կանոններ ձեռնարկի պահանջներով
- Հողային աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային գծագրերի և ՇՆուԿ 3 - 02 - 01 - 87 - ի ձեռնարկի պահանջներով
- Կրող և պատող կոնստրուկցիաների աշխատանքները կատարել համաձայն ՇՆուԿ 3 - 03 - 01 - 87 - ի և ՇՆուԿ III - 3 - 80 ձեռնարկների և աշխատանքնային գծագրերի պահանջներով

Ճանապարհի փոսային նորոգման շինարարության տևողությունը հաշվարկված է ՇՆ - 440 - 79 - ի ընդհանուր դրույթների կետ 19 - ի համաձայն : Աշխատանքների ժամկետները և հերթականությունը տրված են կից ներկայացվող ժամանակացույցում :

- Աշխատանքները կատարելու ժամանակ ձեռնարկել միջոցառումներ տարածքի կանաչապատ գոտիների պահպանման և շրջապատի օդի փոշոտացման բացառման համար :

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում | | | |
| ՓՈՓ | ԹԵՐԹ | N ՓԱՍՏԱԹՂԹԻ | ՍՏՈՐԱԳ | ԱՄՍ | | | | |
| ՏՆՕՐԵՆ | | | | | Փողոցներ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ԳԾԵՑ | | | | | | ԱՆ | ՃՇ - 2 | 42 |
| ՍՏՈՒԳԵՑ | | | | | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

A3